ւազանը Ասլանին յանձնելուց յետոյ նրանք շտապով հեռացան եւ մի քանի րոպէում անյայտացան միւս նեղ փողոցի մէջ, որ տանում էր դէպի գերեզմանատունը: Երեւի, այնտեղ էր նրանց օթեւանը, մեռելների մօտ: Կենդանի մարդիկ այդ թշոառներին իրանց բնակարաններում տեղ չեն տալիս: Խորշում են բոշաներից...

Բայց որքա՜ն ուրախացաւ Հիւբբին, երբ տեսաւ մեզ: Ես չէի կարողանում մոռանալ այն սիրուն ժպիտը, որ երեւաց նրա արեւակէզ, սեւացած դէմքի վրայ: Բայց ինչո՞ւ էր այժմ նա այնպէս վատ հագնուած: Նա այլեւս այն գոյնզգոյն, խայտաճամուկ հագուստը չունէր, որ տեսել էի նրա վրայ Ս. Տիրամօր տօնախմբութեան ժամանակ: Խե՜ղճ աղջիկ, թափառական կեանքը նրա վրայ եւս արել էր իր դժբախտ ազդեցութիւնը: Հագուստը բոլորովին մաշուած էր. մաշուած էին եւ փոքրիկ տրեխները, որ կապել էր իր առանց գուլպայ ոտներին: Երեւում էր, որ շատ հեռու տեղից էին եկել:

Պառաւը աւելի խոժոռադէմ եւ զայրացած երեւաց ինձ: Երեխաների միամիտ վարմունքը չէր կարող այնպէս վրդովեցնել նրան: Ուրեմն, այլեւս ի՞նչ պատճառ կարող էր ունենալ: Ես այդ պառաւին միշտ տխրադէմ եւ թախծալի էի տեսել, բայց զայրացած, ոչ երբեք: Նրա սրտի վրայ ծանրացած էր մի ցաւ, մի դառն կսկիծ, որ միշտ տանջում էր նրան: Սկսեալ այն օրից, որ ես առաջին անգամ տեսայ այդ պառաւին արաբական մինարեթի մօտ, ամայի աւերակների մէջ, այդ թշոառ կինը խիստ տխուր տպաւորութիւն էր թողել իմ վրայ, որ աւելի նման էր կարեկցութեան եւ ցաւակցութեան, եւ ես պատրաստ կը լինէի բաժանել նրա ցաւերը, եթէ նա իր սրտի գաղտնիքը յայտնելու լինէր ինձ: Բայց ի՞նչ կար նրա սրտում. ի՞նչ էր պատճառը, որ նա այդպէս թափառում էր երկրէ-երկիր եւ, որպէս ստոեր, չէր բաժանւում Ասլանից ու նրա ընկերների ետեւից...

Մենք ման էինք գալիս պարտէզում, վարպետ Փանոսը դեռ շարունակում էր իր հարցուփորձը վանքի եւ անապատականների մասին: Ասլանի ուշադրութիւնը դարձած էր դէպի իր ձեռքի դիւթական գաւազանը, որը, ինչպէս հաւատացրեց Հիւբբին, նրա արհեստի արդիւնքն էր: Բայց հազիւ թէ նա կարող կը լինէր մի այնպիսի գեղեցիկ բան շինել: Գաւազանը սեւ օձի նմանութիւն ունէր, եւ սեւ ներկի տակից խիստ ճիշտ կերպով նկարւում էին այդ սողունի բոլոր թեփուկները, գլուխը, աչքերը, բերանը, լեզուն եւ այլն:

— Այդ ի՞նչ բան է, — հարցրեց վարպետը, ինքն եւս ուշադրութիւն դարձնելով: — Կարծես Մովսէս մարգարէի գաւազանը լինի, երեւի վարդապետներից ընծայ ստացաք:

— Ոչ, մի բոշայ աղջիկից գնեցի, — ասաց Ասլանը: